

Ալեքսանդր Ծատուրյան

Գրչի հանաքներ

eMatenadaran

Ալեքսանդր Ծատուրյան

Գրչի հանաքներ

«Aegitas»

Ծատուրյան Ա.

Գրչի հանաքներ / Ա. Ծատուրյան — «Aegitas»,

ISBN 978-1-77-246824-3

Ալեքսանդր Ծատուրյանը հանդիսանում է իր ժամանակի ամենազարգացած ու խոր միտք ունեցող հեղինակների մեկը: Նա իր 'Գրչի Հանաքներ' բանաստեղծությունների շարքում նուրբ ծաղրի միջոցով վեր է հանում համամարդկային այնպիսի բացասական գծեր, ինչպիսիք են՝ ժլատությունը, տգիտությունը, նախանձը: Նա դատապարտում է՝ սուտը, հասարակական տարբեր խավերի միջեւ առկա խոր հակասությունները, ուժեղի կողից թույլի կեղեքումն ու շահագործումը: Միաժամանակ նա բարձր է գնահատում անհատին՝ մեծ տեղ տալով մարդու ներքին ձայնին:

ISBN 978-1-77-246824-3

© Ծատուրյան Ա.
© Aegitas

Содержание

Մեղա՛ քեզ, աստված… 5
Թուքը 7
Ծիծաղս է գալիս… 8
Խենթը և խելոքը 9
Մարդ ու կին 10
Կաշառված մամուլ 11
Երկու երես 12
Կաշառք 13
Ժամ շինող 14
Հեշտ ճամփա 15
Կյանքի խնջույքը 16
«Ջուխտը» և «կենտը» 17
Թղթախաղ 18
Գայլ-բարեպաշտ 19
Конец ознакомительного фрагмента. 20

Ալեքսանդր Ծատուրյան
Գրչի հանաքներ

Մեղա՛ քեզ, աստված…

(Շատերից մեկի խոստովանանքը)

Կուշտ եմ և առողջ, կյանքից բավական,
Սեղանը առատ, ճաշը պատվական,
Բայց թե ի՞նչպես եմ այդ կյանքին հասած
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Շատ կարճ միջոցում ես հարուստ դառա,
Հողեր, կալվածներ, կառք ու ձի առա,
Բայց ի՛նչ փողերով, ի՞նչպես վաստակած –
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Տրներ շինեցի շքեղ, փառավոր,
Ապրում եմ մեջը, ինչպես թագավոր:
Բայց քանի՛ մարդու ես տուն եմ քանդած
Այդ մի՛ հարցնեք… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Խանութ բաց արի, գործ սկսեցի.
Կարճ ժամանակում մեծ գանձ դիզեցի,
Բայց քանի՛ անգամ ես կոտր եմ ընկած
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Կյանքում ես գտա մի «ազնիվ ընկեր».
Գործիս մեջ դրեց տասնյակ հազարներ.
Բայց վե՞րջը… վերջը նա քաղցած մընաց.
Իսկ ես կշտացա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Ես միշտ ասում եմ և միշտ քարոզում.
«Աղքատն էլ մարդ է, ուտել է ուզում».
Բայց քանի՛ մարդ եմ ես քաղցած թողած —
Այդ մի՛ հարցնեք… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Երբ տեղն է գալիս, սուրբ եմ ձևանում,
Ժամում ծնկաչոք աղոթք եմ անում.
Բայց հոգիս վաղուց սատանին ծախած,
Աշխարհք եմ խաբում… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Թե մեկը պատվիս դիպչի աշկարա,
Ես կրակ կըթափեմ այդ մարդու վերա.
Բայց ծածուկ ինչքա՛ն ես թուք եմ կերած —
Այդ մեր մեջ մընա… Մեղա՛ քեզ, աստվա՛ծ:

Է՜հ, բավական է ձեր գլուխը տանեմ,
Ախար, «զո՛րն ասեմ, զո՛րն խոստովանեմ…»
Ի՜նչ մեղքեր ասեք, որ ես չեմ արած…
Մեղա՛ քեզ, աստվա՛ծ, մեղա՛ քեզ, աստվա՛ծ…

1896

Թուքը

Ասում են – թուքը ո՛ւժ է զորավոր,
Մարդուն կարող է իր պատվից գըցել.
Բայց տեսե՛ք, մեր մեջ… նա՛ է պատվավոր,
Ով միշտ երեսը թըքով է լվացել…

Ծիծաղս է գալիս…

Երբ ես տեսնում եմ աշկարա գողին
Կյանքին տիրացած՝ փարթամ ապրելիս…
Իսկ ինձ ասում են – շիտակ ապրողին
Կյանքը մեկի տեղ՝ հազա՞ր է տալիս —
Ծիծա՞ղս է գալիս…

Խենթը և խելոքը

Քամբախտ մի երկրում մե՛ծ սով էր ընկել…
Երկրի խելոքներ ժողով գումարած՝
Միտք էին անում, թե ի՞նչպես փրրկել
Խեղճ ժողովրդին, սովից չո՛փ դառած…
Ու խոսում էին, խոսո՛ւմ, հա խոսո՛ւմ,
Ասես մարգարտի աղբյուր էր հոսում…
Մեկ էլ՝ որտեղից, այդ մեծ կաճառում
Ելավ խենթի մեկն, այսպես բան ասաց.
«Էհ, կո՛ւշտ խելոքներ, ի՞նչ եք շատ ճառում,
Շտապե՞ք, քաղցածին տվե՛ք կըտոր հաց…»:
Խելոք կաճառը, տեսավ, որ իրան
Խրրատ է կարդում մի խենթ, բաց–բերան.
Քիթը վեր քաշած՝ քա՛հ, քա՛հ ծիծաղով,
Խենթի խոսքերը նա արհամարհեց…
Ընտրեց բազմամարդ մի հանձնաժողով
Եվ սովի հարցը փակված համարեց…
Սա՛ղ տարի խորհեց հանձնաժողովը
Ու ա՛յնքան բազում նիստեր ունեցավ,
Մինչև որ մարդկանց կոտորեց սովը
Ու վերջն էլ՝ անցավ…
Ընթերցո՛ղ, հիմա դու ինքըդ դատի՛ր,
Ու ի՛նքըդ խենթին խելոքից զատիր…

Մարդ ու կին

Կընկատեր, գիտեմ, ու չի՛ ամաչում,
Ինչ տեղ կին. փեշիցն է կըպչում —
Լինի դա տընում, փողոցի միջում,
Կաֆե-շանտանում, թե խոհանոցում…
Ու այդպես լըրբին մենք չենք քարկոծում…

Բայց, աստված չանի՜, կինը բա՛ն անի,
Մի շա՜տ թեթև բան – մեկին հավանի
Ու հետը թեթև սիրախաղ անի.
Կամ թողնի մարդուն, չուզենա խաբի…
Աշխարհը խեղճին սա՛ղ–սա՛ղ կըլափի…

Կաշառված մամուլ

Երբ հայոց թերթում
Ներբող են կարդում
Տըզրուկ աղայի անվան ու փողին,
Իսկույն իմ մըտքում
Մի հարց է ծագում —
«Թերթը ո՞րքան է ստանում տողին…»...

[1896]

Երկու երես

Թուքը երբեք չի բերիլ մեծ վընաս,
Թե որ կյանքում երկու երես ունենաս.
Մեկ երեսին ի՜նչքան ածեն թուք ու մուր,
Մյուսը կըմնա մի՜շտ մաքուր…

Կաշառք

Յուղ են քրսում կառքի անվին,
Որ ընթացքը թեթևանա,
Կառքը յուղած անիվներով
Ծանրը ճամփան հեշտ կընթանա:

Կյանքում կաշառքն, ո՛վ բարեկամ,
Շատ նըման է անվի յուղին.
Կաշառք տալով մենք շատ անգամ
Հեշտ անցնում ենք դրժվար ուղին…

[1896]

Ժամ շինող

Մարդու մեկը մեծ գանձ դիզեց
Հոգին ծախած սատանի,
Բայց մի օր էլ սիրտը ուզեց
Դըրախտ գընալ… Ի՞նչ անի. —

Նա միտք արավ մի ժամ շինել
Խեղճ, հետ ընկած հայ գեղում,
Եվ այդ ճամփով աթոռ գընել
Արքայության մե՛ջտեղում:

Գյուղացիք էլ ուրախացած
Հենց լըսեցին այդ համբավ,
Գյուղի բերքից հետներն առած
Եղ ու կարագ, ճուտ ու հավ,

Ժամ շինողին բերին ընծա
Եվ զո՛ռ տվին օրհնանքին.
«Աղա՛, աստված ջեբիդ ո՛ւժ տա,
Դըրա՛խտ երթա քո հոգին…»:

Բայց մի գիշեր աղեն քընած՝
Հանկարծ տեսավ երազում,
Ժամը պատրաստ, իսկ ինքն ընկած
Դըժոխքի սև կարասում[1]

Եվ սատանեն գըլխի վերև
Քընչփընչում էր ականջին.
«Ա՛, բարեկա՛մ, գալըդ բարև,
Ցանկալի՛ հյուր մեր միջին…»:

Աղեն սոսկաց… «Վա՛յ իմ փողեր,
Վա՛յ, խաբվեցի…» – նա գոռաց,
Եվ երբ զարթեց, շա՛տ ուրախ էր,
Որ դեռ ժամը չէր շինած…

[1] Հայկական ավանդություններում պատմվում է, որ դժոխքում կա կպրով լիքը, միշտ եռացող մի մեծ սև կաթսա, որի մեջ գցում են ամենաթունդ մեղավորներին:

Հեշտ ճամփա

Ի՞նչ ճամփով հեշտ է միշտ լրցնել գրրպան —
Հարուստն այդ ճամփեն լա՛վ է իմանում.
Մեկին բաշխում է նա իր հին գուլպան,
Իսկ հարյուր-մեկի շապիկն է հանում…

[1896]

Կյանքի խնջույքը

Թե կյանքի խընջույք հյուր գնաս ոտով,
Կասեն. «Տեղ չկա՛» – և կանցնես մոտով.
Իսկ թե շնորհ տանես սեփական կառքով,
Հիմա՞ր էլ լինես… կընդունեն փառքով:

[1896]

«Զուխտը» և «կենտը»

Մարդը տրգեղ, կոշտ ու կոպիտ,
Հոգին՝ դատա՛րկ, ջեբը՝ լիք.
Կին է առել ծաղկափրթիթ,
Իբրև ձեռքի խաղալի՛ք…

Արշի՛ն, հաշի՛վ մարդու գլխում,
Ուշ ու միտքը փողի մեջ,
Սիրո ծարավ կրնկա սրրտում,
Երազներին չրկա՛ վերջ…

Կյանք են անցնում մի հարկի տակ,
Բայց սրրտերով խորթ իրար.
Տարբե՛ր ձրգտում, տարբե՛ր ճաշակ,
Կինը – կրրա՛կ, մարդը – քա՛ր…

Եվ նայելով ես այդ զույգին
Միտք եմ անում – թե մի օր
«Զուխտի» կողքին… «Կենտը» բրսնի…
Ո՞վ է արդյոք մեղավոր…

Թղթախաղ

Թո՛ւղթ ու կավի՛ճ, սեղա՛ն կանաչ,
Անքո՛ւն գիշեր, կռի՛վ ու վե՛ճ —
Ահա՛ նոր քայլ դեպի առաջ,
Նո՛ր գործի սեր ազգի մեջ…

Թուղթ են խաղում հարուստ, անփող,
Տերտեր, ուսյալ և անուս,
Նույնիսկ հայ կին, հայ ուսանող…
Ցնծա՛, հա՛յ ազգ, աչքդ լո՛ւյս…

Գայլ-բարեպաշտ

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.